



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԵՐՈՒ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՈՐՃՆԵՔ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԻ ՄԱՏՐԱՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 4 Յուլիսը տօնն է Հայաստան աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորին ու թագուհիին՝ Ս. Տրդատ եւ Ս. Աշխենի, միաժամանակ անուանակոչութեան տօնն է Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան:

Նկատի ունենալով, որ այս Շաբաթ օրը Ամերիկայի Միացեալ Նահանգներու Անկախութեան տօնն է, Ազգ. Առաջնորդարանին մեջ ամսական յաճախակիութեամբ Ս. Պատարագը բացառաբար տեղի պիտի ունենայ Յուլիսի երկորրդ Շաբաթ օրը, 11 Յուլիսին, Երեկոյեան ժամը 6-ին, տօնախմբելու համար մատրան անուանակոչութիւնը:

Ս. Պատարագ պիտի մատուցանե եւ պիտի քարոզէ Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ նաեւ պիտի կատարէ մատաղօրինեքի արարողութիւնը:

## PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AND PRESIDE OVER BLESSING OF MADAGH ON THE NAME DAY OF THE PRELACY CHAPEL

In accordance with the Armenian Church calendar, the Feast of St. Dertad and St. Ashkhen, the first Christian king and queen of Armenia, will be observed on Saturday, July 4<sup>th</sup>. Given that this coincides with Independence Day, the feast, which is also the name day of the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel, will be celebrated with Divine Liturgy and the blessing of *madagh* on Saturday, July 11<sup>th</sup>, at 6:00 p.m.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and conduct the blessing of *madagh*.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՉ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Հ.Ս.Ը.Ը.Ի 34ՐԴ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՆԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՈՒ ՏՈՂԱՆՑՔԻՆ**

Այս շաբաթավերջին տեղի կ'ունենան Հ.Ս.Ը.Ը.Ի 34րդ Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութիւնը, փառատօնն ու տողանցքը, «Պղոմինկիւմ Յայ Սքուլ»ի համալիրին մէջ:



Երիտասարդական միութիւններուն կրպակը:

Առաջնորդ Սրբազնին պիտի ընկերանայ Յոգ. S. Պարթեւ Վրդ. Կիւիմեան:

Կիրակի, 5 Յուլիսին, կ.ե. ժամը 4-ին, Առաջնորդ Սրբազնը ներկայ պիտի ըլլայ Նաւասարդեան մարզախաղերու լրումը նշող փակման հանդիսութեան ու տողանցքին, պիտի փոխանցէ իր պատգամը եւ օրինութիւնները:

Նշենք, որ անցեալ շաբաթ երեկոյեան, Studio City-ի CBS Studio-ի մէջ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Ը.Ի Յաղթանակի Պարահանդեսը:

Առաջնորդ Սրբազնը ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցէց իր օրինութիւնները:

Ուրբաթ, 3 Յուլիսի  
երեկոյեան, թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. S. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան,  
այցելութիւններ պիտի տայ  
կրպակները, որոնց շարքին  
ե մեր եկեղեցիներու

### **PRELATE TO PARTICIPATE IN CLOSING CEREMONIES OF 34<sup>TH</sup> NAVASARTIAN GAMES**

On Thursday, July 2<sup>nd</sup>, the 34<sup>th</sup> Navasartian Games festival began at Birmingham High School. The four day festival will conclude on Sunday, July 5<sup>th</sup>, with the closing ceremony and parade.

On the evening of Friday, July 3<sup>rd</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, will visit the booths to convey his blessings. Among the booths the Prelate will visit is that of the Armenian Church Youth Association.

The Prelate will also attend the closing ceremony on Sunday to convey his blessings and message.

On Saturday, June 27<sup>th</sup>, the Prelate also attended the Homenetmen Victory Ball where he delivered the invocation.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ ՀՕՍ-Ի ՊԱՏԳԱՄԱԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Յառաջիկայ Յինգշաբթի, 9 Յուլիսին, կ.ա. ժամը 11:30-ին, տեղի պիտի ունենայ ՀՕՍ-Ի Շրջանային Վարչութեան Պատգամաւորական 89-րդ ժողովին բացումը, Կլենտելի Brandview Collection սրահին մեջ:

Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ներկայ պիտի ըլլայ ժողովին, աղօթքով պիտի կատարէ ժողովին բացումը եւ պիտի փոխանցէ իր պատգամը:

### **PRELATE TO PRESIDE OVER OPENING OF ARS 89<sup>TH</sup> REGIONAL CONVENTION**

On Thursday, July 9<sup>th</sup>, the 89<sup>th</sup> regional convention of the Armenian Relief Society will take place at Brandview Collective in Glendale.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the opening of the convention, and deliver the invocation and his message.

\*\*\*

## **LITTLE ARMENIAԻ ՑՈՒՑԱՏԱԽՏԱԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Յինգշաբթի, 9 Յուլիսի երեկոյեան ժամը 5-ին, տեղի պիտի ունենայ Հոլիվուտի Little Armenia շրջանին մասին ազատուղիին վրայ հաստատուած ցուցատախտակին բացման արարողութիւնը, որուն պիտի յաջորդէ ընդունելութիւն մը Հոլիվուտի «Կարապետեան» սրահին մեջ:

Առաջնորդ Սրբազնը պիտի ընդառաջէ իրեն տրուած հրաւերին:

### **PRELATE TO PARTICIPATE IN UNVEILING OF LITTLE ARMENIA FREEWAY SIGNS**

On the afternoon of Thursday, July 9<sup>th</sup>, the unveiling of the Little Armenia Hollywood Freeway Signs will take place, hosted by Assemblymember Kevin de Leon, the Armenian National Committee Hollywood Chapter, and the Armenian American Chamber of Commerce Little Armenia Chapter

A reception and Mixer will follow at “Karapetian” Hall.

The Prelacy will be represented at the unveiling.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՉ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՐՈՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿՈՂՄԸ Ի ՊԱՏԻՒ ԿԱՐՏԻՆԱԼ ՍԱՎՏՐԻՆԻՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ**

Յուլիս 1Ին 5, տեղի կ'ունենայ Միացեալ Նահանգներու Մարոնի համայնքի 46-րդ տարեկան համագումարը, Լու Անձելըսի Hayatt Regency Century Plaza-ի մէջ. համագումարը կազմակերպուած է Our Lady of Mt. Lebanon, U. Պետրոս Տաճարին կողմէ:



Այս համագումարին առիթով, Յինգշաբթի, 2 Յուլիսի կեսօրին, ի պատիւ Վատիկանի մէջ Արեւելքի Եկեղեցիներու բաժանմունքի վարիչ Կարտինալ Լեռնարտո Սանտրիի, ընդունելութիւն մը տեղի ունեցաւ նոյն պասդոկին մէջ:

Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընդառաջեց իրեն տրուած հրաւերին ու համագումարի պաշտօնական ճաշկերոյթին ներկայ

եղաւ իբրեւ պատուոյ իիւր:

Առաջնորդ Արքազանը շնորհաւորեց մարոնի համայնքը՝ այս համագումարին առիթով, եւ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի ողջոյնները փոխանցեց Կարտինալ Սանտրիի. ծանօթ է որ Վատիկանի հետ մէր Ս. Աթոռը ունի սերտ կապեր, միջ-Եկեղեցական յարաբերութեանց ծիրին մէջ:

### **PRELATE ATTENDS LUNCHEON IN HONOR OF CARDINAL LEONARDO SANDRI AT THE 46<sup>TH</sup> ANNUAL NATIONAL APOSTOLATES OF MARONITES CONVENTION**

On July 1st, the 46th National Apostolate Maronites Convention convened at the Hyatt Regency Century Plaza, hosted by Our Lady of Mt. Lebanon – St. Peter Cathedral.

On Thursday, July 2<sup>nd</sup>, a luncheon in honor of Cardinal Leonardo Sandri, Prefect of the Congregation for the Oriental Churches of the Vatican took place at the above-mentioned hotel, which H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended.

The Prelate congratulated the Maronite community on this joyous occasion and conveyed to Cardinal Sandri the well wishes of H.H. Catholicos Aram I.

\*\*\*

## **ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆԸ ՀԻՒԾԿԱԼԵՑ ԴԵՍՊԱՆ ՄԱՐԻ ԵՌՎԱՆՈՎԻՉԸ**

Լու Անձելըս իր այցելութեան առիթով, Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Մարի Եռվանովիչ Ուրբաթ, 26 Յունիսի երեկոյեան այցելեց Ազգային Առաջնորդարան, ընդունուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ Եւ հիւրընկալուեցաւ ընթրիքով, որուն մասնակցի Եղան Թեմիս ժողովականութեան ու միութենական ներկայացուցիչները: Ապա, դեսպանը Ազգ. Ֆերահեան վարժարանին մէջ ներկայ Եղաւ ժողովրդային հաւաքի մը, որ յատկացուած է հայութիւնը յուզող այժմեական հարցերու՝ Հայաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութեանց ու գործակցութեան լոյսին տակ:



Պաշտօնական ընդունելութիւնը տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ: Հիւր դեսպանը առաջին հերթին առանձին հանդիպում մը ունեցաւ Առաջնորդ Սրբազանին հետ, անոր գրասենեակին մէջ, ապա սրահին մէջ հիւրընկալուեցաւ ընթրիքով: Ներկայ Եին Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիգրան Գրիգոր Յովհաննիսեան, Թեմիս ժողովականութեան, հայկական կազմակաերպութեանց ու միութեանց ներկայացուցիչները:

Աւելի ուշ, հիւր դեսպանն ու հիւրընկալներ ուղղուեցան Ազգ. Ֆերահեան վարժարանի սրահը, ուր տեղի ունեցաւ ժողովրդային հաւաքը: Արձարծուեցան Հայաստանն ու հայութիւնը յուզող հարցեր, որուց շարքին՝ Միացեալ Նահանգներո, Թուրքիոյ ու Ազրպէճանի հետ Հայաստանի յարաբերութիւններն ու յարակից այժմեական հարցեր:

Դեսպան Եռվանովիչ Կիրակի, 28 Յունիսին այցելեց նաեւ Յոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցին ու ներկայ Եղաւ Ս. Պատարագին ու Յայրապետական Մաղթանքի արարողութեան: Ապա, Եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

(Այցելութեան մասրամասնութիւնները տեսնել սոյն կայքէի լրատուութեան բաժինին մէջ):

*(Հուսանկարներ Նորա Եազուպեանի)*

### **PRELACY HOSTS VISIT OF AMBASSADOR MARIE YOVANOVITCH**

On Thursday, June 25<sup>th</sup>, 2009, U.S. Ambassador to Armenia H.E. Ambassador Marie Yovanovitch arrived in Los Angeles for a meeting with the Armenian community. On Friday, June 26<sup>th</sup>, the Western Prelacy hosted Ambassador Yovanovitch to a dinner at the Prelacy, followed by a community forum at "Avedessian" Hall of Ferrahian School.

After a private meeting with the Prelate, the Ambassador headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where the dinner took place, during which remarks were delivered by the Prelate, Executive Council Chair Dr. Garo Agopian, and Dr. Viken Hovsepian.

The Ambassador then headed to Avedessian Hall where over three hundred fifty community members had assembled to hear her address.



The Ambassador gave a general report of the current situation in Armenia and the goals the U.S. has set with regards to the democratic development and economic advancement of Armenia to ensure that its development as a strong and

secure nation. She also touched upon U.S.-Armenia relations, U.S.-Turkey relations and the opening of the border, and the Nagorno-Karabakh conflict. At the end of her address the Ambassador answered questions from the audience which focused mainly on Genocide recognition, the Millennium Challenge Corporation, U.S. military aid parity, and the Nagorno-Karabakh conflict.

On Sunday, June 28<sup>th</sup>, Ambassador Yovanovitch attended Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood. A reception followed at “Karapetian” Hall hosted by the Pastor and Board of Trustees and with the participation of the Prelate, Executive Council members, and members of community organizations.

Please visit the news section of our website for the full press release and photos.

(Photos by Nora Yacoubian)

\*\*\*

## ԱՐԵԼԵԿԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՐՁԱՆԻ ԱՌԱՋԱՌՈՂՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Արելեկան Ուղղափառ Եկեղեցիներու՝ Ղըպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Քայց. Առաքելական Եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքաբթի, 30 Յունիսին ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ուսենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան նախագիծը:

Քանդիպումը տեղի ունեցաւ Ղըպտիներու Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մեջ, Նորթիճ, հիւրընկալութեամբ Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Սրապիոն Եպիսկոպոսին:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կտորի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. S. Եութիս Զափլան Վրթեպիսկոպոս, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. S. Յովսան Արք. Տերտերեան, եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, իւրաքանչիւրը երգելով ու աղօթելով իր լեզուով:



Առաջնորդ Սրբազան  
Հօր կ'ընկերանային  
Քրիստոնեական  
Դաստիարակութեան  
Գրասենեակի զոյգ  
Վարիչները՝ Գերաք. S.  
Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան  
եւ Յոզշ. S. Պարթեւ Վրդ.  
Կիւլիմեան:

Ժողովը զեկուցում  
լսեց Երեք Եկեղեցիներու  
Երիտասարդական  
խմբակներու համագումարի  
մասին, որ տեղի ունեցաւ

Չաբաթ, 20 Յունիս 2009-ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ յարկին տակ, հովանաւորութեամբ խորհուրդի անդամ Երեք Եկեղեցիներու թեմակալ Առաջնորդներուն: Նաեւ զեկուցուեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու ապագայ ծրագրին մասին, որով յառաջիկայ Նոյեմբեր 21-ին տեղի պիտի ունենայ Միջ-համայնքային Կիրակնօրեայ Վարժարաններու միօրեայ հաւաք, Կտորիներու Ս. Եփրեմ Առաջնորդարանիստ Մայր Տաճարին մէջ, Պըրպէսք:

Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ Երիտասարդական խմբակներու գործունեութեան:

Որոշուեցաւ այս տարի եւս կատարել համատեղ Ս. Պատարագ, որ տեղի պիտի ունենայ Ղըպտի Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, յառաջիկայ Սեպտեմբեր 24-ին:

Ժողովական աշխատանքներու աւարտին տեղի ունեցաւ սիրոյ սեղան, որմէ Ետք՝ յիշատակի նկար մը առնուեցաւ:

## PRELATE PARTICIPATES IN MEETING OF COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On Tuesday, June 30<sup>th</sup>, 2009, the meeting of the Council of Oriental Orthodox Bishops took place at St. Mary and St. Athanasius Coptic Church in Northridge, hosted by H.G. Bishop Serapion.

Participating in the meeting were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion, and clergy members. The Prelate was accompanied by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

The day began with morning prayers led by the spiritual leaders in their respective languages.



During the meeting, a report was given on the youth gathering which had taken place on Saturday, June 20<sup>th</sup>, at St. Gregory Armenian Apostolic Church in Pasadena under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops, as well as on the next Sunday School gathering which till take place on November 21<sup>st</sup> which will take place at the Syriac Church Diocese in Burbank.

The Council discussed the strengthening of the youth group and the annual joint clergy conference which will be hosted by the Coptic Church on September 24<sup>th</sup>.

At the conclusion of the meeting, the spiritual leaders and clergy were hosted to a reception.

\*\*\*